ԻԴԷԱԼ

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑԻ

Հերիք, իդէալ, ինձ խաբէական
Յոյսերով վառած՝ քարշես քո ետից.
Կանգնիր և շուտով ինձ տուր պատասխան.
Խօսիր, և խօսիր անկեղծ քո սրտից։
Ո՞ւր է այն շքեղ աւետեաց աշխարհն,
Ուր դու խոստացար ինձ քեզ հետ տանել.
Զբրկանքներով լի այս ճանապարհը
Ինձ համար արդէն ծանրը է դարձել։
—«Չը գիտե՞ս արդեօք, օ՛ թո՛յլ հոդեղէն,
Դեռ որքան հեռու է մեր նպատակ,
Որ հինգ քայլ չ՝արած՝ յոգնեցիր արդէն,
Ինչպէս փոքրոգի անմիտ պատանեակ։
Իմացիր ուրեմն, որ ո՛չ դու, թշուառ,
Եւ ո՛չ քո որդիք, և ո՛չ քո թոռներ
Տեսնելու չեն այն աւետեաց աշխարհ,
Ուր ուղղում եմ ես իմ հաստատ քայլեր։
Բայց նա կայ, նա կայ, և դարերից յետ,
Ես իմ մրտերիմ ուղեկիցներով
Կը մրտնեմ երկիրն այն երանաւէտ՝
Պատած հրրեղէն ճառագայթներով։
Օ՛, արիացիր և արի՛ ինձ հետ՝
Տառապանք, քրրտինք արհամարելով,
Եւ մինչև վերջին քո սառ իջևան

Թող միշտ վառ մընան քո բոլոր յոյսեր։
Թէ կը գայ մի օր փայլուն ապագան,
Կը բացւի նոր բաղդ, նոր, պայծառ օրեր։
Բայց եթէ քո մէջ էլ վառ յոյս չը կայ
Եւ ոչ ջերմ հաւատ — ես հրաժարւում եմ....
—Թող ամբողջ աշխարհ ինձ լինի վրկայ.
Իդէալ, ինձ տար. ես հետևում եմ։

Թիֆլիս. 23 մայիսի, 1891 թ.